

ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՍՈՒՄ

(20 սեպտեմբերի, կիրակի, 1998)

Սույն թվականի սեպտեմբերի 20-ին, կիրակի օրը, Արագածոտնի առաջնորդանիստ Օշականի Ս. Սեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվող Ս. Պատարագի ընթացքում, ձեռնամբ Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի և խարտավիլակությամբ Տ. Սկրտիչ քին. Երանյանի, քահանայական սրբազան ձեռնադրություն և օծում ստացան երկու շնորհալի սարկավագներ՝ Արարատ սրկ. Կարապետյանը և Հայկ սրկ. Սկրտչյանը:

Պատարագի նախորդ օրը, սեպտեմբերի 19-ին, հետ երեկոյան ժամերգության, տեղի ունեցավ քահանայական կոչման ընծայում: Ընծայվելը առ դուռն Ս. Եկեղեցվո ծնրադրյալ մոտենում են ձեռնադրող Սրբազան Հորը, «Նայեա ի մեզ եւ ղղորմեա մեզ Ջրիստոս որ ունիս բազում գթութիւն» շարականի երգեցողության ներքո: Խարտավիլակ Տ. Սկրտիչ քին. Երանյանի «Հրամայեա Տեր, օրհնութեամբ ասել» ազդարարումից հետո ձեռնադրող Սրբազանը երկնային ուրախությունն ու օրհնությունն է բաշխում ընծայվելերին: Ապա ընծայվելը արտահայտում են հերձվածների հանդեպ իրենց մեղքումը, նզովում հերձվածողներին, և խոստանում հետևել մեր սրբազան Հայրապետների սահմանած կանոններին, հայտնում են իրենց պատրաստակամությունը աշակերտելու և հետևելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու լույս հավատքին: Ապա ձեռնադրող Սրբազանի հրամանով ընծայվելը բարձրաձայն կարդում են Ս. Գրիգոր Տաթևացու հավատամքը, որը և լինում է նրանց դավանության հայտարարությունը առաջի աստվածընկալ Ս. Սեղանի, ձեռնադրող Սրբազան Հոր, միաբան եղբայրների և ներկա ժողովրդի:

Քահանայական կոչման արարողությունն ավարտվում է «Պահպանիչ»-ով և «Տերունական աղոթք»-ով:

Կիրակի օրը, օգոստոսի 20-ին, Օշականի Ս. Սեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվում է Ս. Պատարագ, օրվա պատարագիչն է ձեռնադրող Սրբազան Հայրը՝ Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Ս. Պատարագին ներկա էին հյուրեր և մեծաթիվ հավատացյալներ:

Նորընծաները «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» շարականի երգեցողության ներքո մոտենում են Խորանի աստիճաններին, ծնրադիր վեր բարձանալով դառնում դեպի արևմուտք, դեպի հավատացյալ ժողովուրդը, «Աստուածային և Երկնային շնօրի» շարականի երգեցողության ներքո վեր են բարձրացնում ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման, ի նվիրումն հոգևոր կյանքին ու Հայ Առաքելական Ս. Եկեղեցու սպասավորությանը:

Հրաժարման պահից և «Աստուածային և Երկնային շնորի» շարականից հետո նորընծաները ծնրադիր մոտենում են Սրբազան Հորը, և նա իր ձեռքը

դնելով նրանցից յուրաքանչյուրի գլխին՝ արտասանում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, և դուք ամենեքեան աղօթք արարեք, զի արժանի լիցիմ սոցա զաստիճան քահանայութեան» աղոթքը:

Սուրբ Պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Սպա «Մեծաւ երկիւղիւ» և հանդիսավորապես Ս. Խորան է բերվում սրբալույս մեռողնը: Պատարագիչ Սրբազան Հայրը սկսում է մեկ առ մեկ օձել ընծայացուների ճակատը, աջ և ձախ ձեռքերը՝ վերանվանելով նրանց ըստ կարգաց և կանոնաց Հայաստանյայց եկեղեցվո՝ Սրարատ սրկ. Կարապետյան՝ Տ. Զորայր, Հայկ սրկ. Սկրտչյան՝ Տ. Հայկազուն:

Օժման արարողությունից հետո պատարագիչ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ է խոսում:

Սուրբ Պատարագի ավարտից հետո Նորասօծ քահանաներին է մոտենում եկեղեցում ներկա ողջ հավատավոր ժողովուրդը և մեկ առ մեկ համբուրում նրանց մյուռոնասօծ ձեռքերը:

ՄՈՒՇԵՂ ՄՐԿ. ՀՈԿՅԱՆՆԻՄՅԱՆ

[Faint, mostly illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]